ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՅԻ

ՅԱՒԵԼՈՒԱԾ։

1885 № 4

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՄԻ ԿՈՂՈՎ ԵԼԱԿ

(Մի պարարոդուխթեամբ)

Թարգմանեց Խ. Ծ. Վ. Ս.

Գինն է 20 կոպ.

ԱԽԱԼՑԽԱ
ՄԿՐՏԻՉ ՂԱԼԱՄԳԱՐԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ
1885

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՅԻ

ՅԱՒԵԼՈՒԱԾ։

1885 № 4

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

ՄԻ ԿՈՂՈՎ ԵԼԱԿ

(Մի արարողութեամբ)

Թարգմանեց Խ. Ծ. Վ. Ս.

Գինն է 20 կոպ.

ԱԽԱԼՑԽԱ
ՄԿՐՏԻՉ ԴԱԼԱՄՔԱՐԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ
1885

ԽԱՂԱՑՈՂՆԵՐ.

ԳՐԻԳՈՐ Սահակեան.

ՏԻԳՐԱՆ, 13 տարեկան
ՀԵՂԻՆԷ, 9 տարեկան } Նորա որդիներ.
ԱԲԳԱՐ, 7 տարեկան

ՅՈՎՀԱՆՆԷՍ, Ծերունի,

ՄԿՐՏԻՉ, Աղքատ,

ՄԱՐԻԱՄ, գիւղական աղջիկ։

ՄԻ ԿՈՂՈՎ ԵԼԱԿ։

(Թատրոնը ներկայացնումէ բլուրներով շրջապատված հովիտ։ Բլուրների վերա կան թփեր և եղևիններ։ Աջ կողմում մեծ ծառի տակ նստարան)։

ԵՐԵՎՈՅԹ Ա.

ՀԵՂԻՆԷ ԵՒ ԱԲԳԱՐ։

ՀԵՂԻՆԷ (կողովը ձեռին). Սիրելի Աբգար, տես որքան ելակ կայ այստեղ, կարծես թէ երկնքից անձրևի հետ թափած են։ Տես թէ այս կարմիր պայծառ պտուղները որքան գեղեցիկ են այս շուշանների մօտ, որոնց ծաղիկները ձիւնի պէս սպիտակ են, այս ծառերի տակ, որոնց տերևները սիրուն կանաչ գոյն ունին։

ԱԲԳԱՐ (Թռչկոտելով և խաղալով, ձեռին բռնած ունի մի ճիւղ, որի վերա դեռ մնացած են կանաչ տերևները). Ահ. ընչ ուրախ եմ։ Իմ բոլոր շուրջս ամեն տեղ ելակ կայ։ Ինչ գեղեցիկ գոյն ունին այս համեղ պտուղները։ Շուտ սկսենք։ Մի ամբողջ կողով կժողովենք (ձգումէ ճիւղը և ժողովումէ ելակը)։ Սիրելի քոյրիկ. երբոր կհատաքեանք մի լի կողով, ես նորան հայրիկիս կտանեմ, այնպէս չէ՞։

ՀԵՂԻՆԷ. Իհարկէ, եղբայր։ Ամաչին լի կողովը կհատաքեանք հայրիկիս համար, իսկ միւսը մեզ համար։ Հարկաւոր է մինչ նախ ծնողների վերա մտածել, և յետոյ արդէն սեփական անձի վերա։ Դէհ սկսիր աշխատիր, շուտ արա։ (Ներդ երգելով մրանումեն թփերի մէջ հատաքելով և քիչ ժամանակից յետոյ հեռանումեն, երգ միայն լսվելով)։

Երևոյթ Բ.

ՊԱՐՈՆ ՍԱՀԱԿԵԱՆ ԵՒ ՏԻԳՐԱՆ։

ՏԻԳՐԱՆ (սրինգը թեւի տակ դրած). Հայրիկ, այստեղ տեսարանը աւելի գեղեցիկ է, բոլորը շրջակայքում ոչ մի տեղ չէ կարող հաւասարվել սորան։ Այստեղ արձագանքն ևս հիանալի է։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Կէս ժամում դու լաւ ճանաչեցիր բոլոր այս տեղերը։ Դու ճշմարիտ ես ասում, որդեակ, այս տեղը զմայլեցուցիչ է։ Չեմ յիշում տեսած եմ արդեօք սորանից աւելի գեղեցիկ մի բան. թէև մեր անիւը կոտրվելով, մենք կէս ժամ կորցրինք ճանապարհին, բայց անօգուտ չանցաւ։ Ես կհանգստանամ այս ծառի ստուերի տակ, նստարանի վերա և կնայեմ այս զմայլեցուցիչ բնութեան գեղեցկութեանը։

ՏԻԳՐԱՆ. Հայրիկ, լսեցէք արձագանք, սա դուրս է թռչում ժայռի տակից վազող աղբիւրի մօտից, որի մաքուր և պարզ ջուրը արդէն շատ վայելչութիւն տուեց մեզ։ (Սրինգը նուագումէ, արձագանքը կրկնումէ)։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ (վեր է կենում և հիանումէ տեսարանով). Զարմանալի բան է։ Այս տեղը կարծես ինձ ծանօթ լինել, ինձ թուումէ թէ ես հայրենի երկրումս եմ, որտեղ ճանաչումէի բոլոր ծառերը և բոլոր թփերը, մանկութեանս ընկերներիս պէս։ Հոգուս մէջ մի անսովոր յուզմունք եմ զգում, և կարծես երազի մէջ տեսնումեմ այն ամենն, ինչ որ տեսել եմ առաջին մանկութեանս մէջ։ Այս ինձ ենած տեղս շատ նման է այս տեղին։ Մտաբերում-

եմ ինչպէս այծերը բարձրանումէին ժայռերն վերա, որոնք բոլորովին սոցա նման էին։ Մտաբերումեմ մինչև անգամ այն խրՀիթները, որոնք դու տեսնումես ահա այնտեղ ներքև։

ՏԻԳՐԱՆ. Եւ Կարելի է դուք նոյն իսկ ձնած տեղդ էք։ Դուք շատ անգամ պատմած էք ինձ, որ մի անակնկալ դէպք ստիպեց ձեզ թողնել ձնած տեղդ և երթալ մայրաքաղաք, բայց մեն ամասնուելիանները երբէք չէք պատմած.....

Երեւոյթ Գ.

ՆՈՅՆ ԱՆՁՆԵՐ ԵՒ ԱՐԳԱՐ։

ԱՐԳԱՐ (ելակով կողովը ձեռին). Ահա, հայրիկ։ Ահա մի ամբողջ կողով ելակ, որ բոլորն ես ձեզ եմ ընծայում։ Ելակը հիանալի է, հաստած է։ Մեծաչն դուք պիտի ուտէք։

Պ. ՍԱՀԱԿՆԱՆ (դառնալով մի կողմ). Ոչ, չեմ կարող այդ պատուղները տեսնել։

ԱՐԳԱՐ։ Ձեզ ինչ պատահեց, հայրիկ, դուք արտասուումէք, ուրեմն դուք չէք սիրում ելակ։ Բայց նայեցէք որքան գեղեցիկ է, խոշոր և թարմ է։

ՏԻԳՐԱՆ. Ո՜հ Աստուած իմ, ինչ եղաւ ձեզ, հայրիկ, դուք արտասուումէք։ Այդ ինչ պիտի նշանակէ։

Պ. ՍԱՀԱԿՆԱՆ. Հանդստացիր, որդեակ, ոչինչ չկայ։ Աբգար, գնա քրոջդ ասա և այս կողովը տար նոյնան։ Եթէ ինձ այս սարսի մեծաւորեան տակի տային, ես չէի կարողանայ ուտել այդ պատուղներից մի հատ անգամ, այո, և ոչ մի հատ ես։

ԱԲԴԱՐ. Ես շատ յոգնած եմ.... Այժմ շատ տաք է.... Ես կկամենայի այստեղ քնել։

Պ. ՍԱՀԱԿՆԱՆ. Բոլորովին հաւատումեմ քեզ, որդեակ, զու այսօր աշխատեցար դէմ վերկացար։

ՏԻԳՐԱՆ. Նայիր տես ահա այստեղ ժայռի մօտ ծառի տակ զու կարող ես փառաւոր քնել։ Դու սառեալ կլինիս ստուերի մէջ, կակուղ խոտի և ոսկեզոյն ծաղիկների վերա։ Հաւատայ ինձ, որ երբ յոգնած ես լինում, խոտի վերա աւելի լաւ ես քնում քան թէ կակուղ բարձերի վերա։

ԱԲԴԱՐ (կողովը դնումէ խոտի վերա և մօտը սառկումէ). Բարի գիշեր, հայրիկ։ Բարի գիշեր, Տիգրան։

ՏԻԳՐԱՆ. Բարի հայրիկ, Հեղինէն և ես նկատած ենք, որ ամեն ամառն, երբ եւլակը հասնումէ, զուք սկսումէք շատ տխրել, և նորան նայելու ժամանակը, մինչև անգամ պատրաստ էք արտասուելու։ Բայց մենք չգիտենք ձեր տխրութեան պատճառը։ Բացատրեցէք ինձ խնդրումեմ այս գաղտնիքը։

Պ. ՍԱՀԱԿՆԱՆ (նստելով նստարանի վերա). Նըստիր մօտս, սիրելի իմ Տիգրան։ Մինչև այսօր բացի ինձանից ոչ ոք չգիտէր իմ գաղտնիքս։ Այս վայրկեանից զու իմ բարեկամ և մխիթարիչ կլինիս։ Այսօր քո ներկայութեամբ ես կարող եմ իմ վերայից վերցնել տխրութեան ծանր բեռը։

ՏԻԳՐԱՆ. Կաշխատեմ ձեր հաւատարմութիւնը արդարացնել, սիրելի հայրիկ։

Պ. ՍԱՀԱԿՆԱՆ. Այս դիպուածը ինձ բաղդաւորութիւն բերեց, բայց նոյնպէս և տխուր ժամեր։

ՏԻԳՐԱՆ (նստելով նորա մօտ). Պատմեցէք խընդ-

դրումեմ ձեզ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Իմ հայրս աղքատ մարդ էր, հիւսիսային Թիւրքա-Հայաստանից, բայց իմ մօրս ես չեմ յիշում, որովհետև նա մեռած էր, մինչդեռ ես օրօրոցում էի։ Մեծ եղբայրս բարկացող և խոր-ամանկ էր, շատ անգամ վրէժխնդրութեամբ ծեծումէր ինձ նորա համար, որ հայրս ինձ նորանից աւելի էր սիրում։ Մի անգամ եղբայրս ինձ տարաւ մերձակայ անտառը ելակ հաւաքելու։ Բաւական ելակ ուտելուց յետոյ, նա գնումէր բոլոր թփերը, բարձրանումէր ամենաբարձր ծառերի վերա թռչունների բոյները գտնելու։ Այս միջոցին ես մի կողով ելակ ժողովեցի, որը կամենումէի հօրս բերել։ Այն ժամանակ եղանակը սաստիկ տաք էր, ես քնեցի թփի տակ, իմ մօտս ելակով լի կողովը դրած։ Տէր Աստուած իմ, ես քնած էի նոյնպէս հանգիստ, ինչպէս որ այժմ քնած է Արգարը. ես այն ժամանակ նորա չափ բարձր էի և նոյն հասակը ունէի։ Երբ ես զարթեցայ, արդէն գիշեր էր։ Կողովիս մէջ ոչինչ չկար, եղբայրս գնացել էր, հանելով իմ գրպանից վերջին հացի կտորը, որ ես վերցրել էի հետս։ Այսպէս մնացի ես անտառում միակ միայնակ, եղբօրից ձգված։

ՏԻԳՐԱՆ. Ձեր եղբայրը խստասիրտ և թեթևամիտ մարդ է եղած։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ես իզուր կանչումէի նորան, միմիայն արձագանքն էր ինձ պատասխանում։ Ես սկսեցի վազել դէպի մեր տունը, որքան իմ ոյժս կտանէր, բայց շփոթված լինելով, ճանապարհից շեղվեցայ, և որքան աւելի վազումէի, այնքան աւելի

էլ հնոանում այն տեղից, ուր կամենումէր հասնել։ Շուտով ինձ վախեցրեց զարհուրելի փոթորիկը. կայծակը, ամպերի որոտումն և անձրևի հեղեղի նման թափվելը սաստկացնումէին երկիւղս։ Ես մինչև անգամ վախենումէի հեղեղների մէջ խեղդվելուց։ Այս սարսափի մէջ, ես ջերմեռանդութեամբ աղօթեցի և Աստուած լսեց իմ աղօթքը։ Դադարում ելևեցաւ մի հիանալի կառք, լուսաւորված երկու լապտերներով, նորա մէջ նստած էր իշխանուհի Փառաւորեան իւր որդիներով։ Նոքա լսեցին իմ կոծն և աղաղակս, կառքը կանգնեց, ծառան վազեց դէպի ինձ լապտերը ձեռին և ինձ տարաւ իշխանուհու մօտ, որը խիստ գթալով իմ թշուառութեան վերա իւր մօտ առաւ, թէև ջուրը աղբիւրի նման վազումէր իմ հագուստներից։

ՏԻԳՐԱՆ. Իշխանուհի գեղեցիկ և վեհանձնարար է վարվել ձեզ հետ, բայց նա չմտածեց միթէ ձեզ ձեր հօրը դարձնել։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ի հարկէ մտածեց, բայց այդ միջոցին չէր կարող իւր ցանկութիւնը կատարել։ Նա ինձանից հարցրեց հօրս ազգանունը, բայց ես միմիայն նորա անունը կարողացայ ասել։ Նա հարցրեց թէ ինչ զաւառից եմ, բայց ես չգիտէի ինչ պատասխան տամ։ Նա վճռեց, որ առաջին իշխանում ինձ յանձնէ, որ հասցնեն իմ ծնողներիս, բայց այն ժամանակ պատերազմ կար և քիւրդեր և պարսիկներ յաճախ յարձակմունք էին անում և իշխանուհին ոչ մի կերպով չկարողացաւ հասնել իւր բարի ցանկութեանը։ Արշալոյսի դէմ մենք անտառից դուրս եկանք և գնումէինք երաշտի վերա-

յով, քիւրդերը մեր վերա յարձակվեցան և մեր կառքը հազիւ փախաւ նոցա ձեռից։ Իշխանուհին ես ևս հետը գնաց և ուրիշ նահանգներ իւր կալուածատեղը։ Նա երկար և լգուր որոնեց հօրս, որովհետև պատերազմը արգելք էր լինում շարունակ հաղորդակցութիւններին։ Վերջապէս տեսնելով, որ ամենևին լուր չեկաւ ծնողներիս մասին, նա վճռեց զաղաբեցնել խուզարկութիւններ։ Իշխանուհին ոչինչ չգիտէր իմ ազգի մասին և իմ ազգանունս Սահակեան դրեց, այն սուրբի անունով, որ օր որ գտաւ ինձ։ Նա ինձ մինչտ սիրումէր և քընքշարար էր վարվում ինձ հետ և նորա որդիներն ևս նորա օրինակին էին հետևում։ Ես վոքր եչխանի հետ էի սովորում և այն ուսման շնորհով է որ այժմ այսպիսի նշանաւոր պաշտօն ունիմ։ Անտառում պատահած անբաղդ դէպքից յետոյ ոչինչ տեղեկութիւն չստացայ ոչ հօրս և ոչ եղբօրս մասին։

ՏԻԳՐԱՆ. Ո՞ր քան կուրախանար ձեր հայրը, եթէ տեսնէր ձեզ այդպէս նշանաւոր և հարուստ մարդ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. (զգացմունքով). Ոչ հայր իմ, եթէ դու դեռ կենդանի ես, ինչ հիացմամբ քո վերջին օրերիդ սփոփանք կդառնամ այժմ, երբ Աստուած շնորհել է ինձ զանազան պարգևներ։ Սակայն կարելի է արդէն վաղուց պատել է քո և մօրս գերեզմաններին մամուռը։ Կարելի է եղբայրս դեռ ևս կենդանի է։ Ի՞նչ է անում արդեօք։ Ի՞նչով և ի՞նչպէս է ապրում։ Ո՜հ, եթէ ինձ յաջողէր նորան տեսնել, ինչպիսի ուրախութեամբ կնեղէի նորան և կսեղմէի նորան կուրծքիս վերա։

ՏԻԳՐԱՆ. Հայրիկ, դուցէ նախախնամութիւնն ա-

ռանց նպատակի չէ բերած ձեզ այստեղ, այս սարերի մէջ։ Կարելի է այստեղ կգտնէք թէ ձեր հօրը և թէ եղբօրը։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ի՞նչ յոյսով։ Կարելի է. բայց ինչպէս գտնեմ նոցա։ Այստեղի լեռնային շղթաները շատ երկար են ձգվում։ Եւ յետոյ, իմ հեռանալու միջոցից շատ ժամանակ է անցած։ Մարդիկը նոր են։ Ո՛րքան փոփոխութիւններ են պատահում այդքան ժամանակում։ Զէ, յոյսը ինձ չէ կարող խաբել, ես ոչինչ չեմ ցմանայ։ (Վերջ է կենում նստարանից)։ Ով բարձրեալ Աստուած, Դու տեսնումես թէ ինչպիսի զգացմունք են ոգևորում ինձ այժմ։ Հարկ չկայ յայտնել Քեզ իմ ցանկութիւնները։ Դնանք, Տիգրան, փոքր ինչ զբօսնենք այս շրջակայքում։ Ես ամեն բան կտայի, միայն թէ տեսնէի այն խրճիթը, որտեղ ես ծնվեցայ, այն պատէզը, ուր ես վազվզումէի, և այն ծառերը, որոնք աճումէին մեր ժայռերի տակ։ Թէև շատ տարիներ անցած են, բայց ես միանգամ տեսնելուն պէս կարող եմ ճանաչել բոլորը։

ՏԻԳՐԱՆ. Աբգարին զարթեցնեմ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ոչ, թող նա քնէ։ Դորան այստեղ չեն ձգի ինչպէս ինձ։ Գնանք ասենք Հեղինէին, որ այնտեղ շուշաններից փունջեր է կապում, որ չհեռանայ այստեղից և նայէ եղբօրը։

Երևոյթ Դ.

ՄԱՐԻԱՄ (միայնակ, մէկ ձեռին բռնած ունի շուշանների փունջ, միւսում կուժով ջուր)։

Ախ ո՛րքան սիրումեմ շուշանները։ Սոցա սրձա-

թանման գոյնը մեզ լեշեցնումէ, որ մենք ևս նոյնպէս պիտի լինինք հոգով մաքուր, և նոյնպէս պիտի զարդարենք բնութիւնը։ (Տեսնելով քնած Աբգարին). Աստուած իմ... Ի՞նչ եմ տեսնում... անծանօթ մի մանուկ քնած է այստեղ թիկ տակ։ Նա հարուստ հագուստ ունի հագած, նորա ծօտ դրված է մի կողով լի ելակ։ (Մօտենումէ Աբգարին). Ինչ սիրուն տղայ է։ Կարմիր է և պիտակ ինչպէս ելակի թփերի վերա սլտուղները և ծաղիկները։ Բայց հանդարտ, հայրիկս չէ նորան զարթեցնել։ Նա երևումէ բարի և քաղցր։ Ինչպէս հանգիստ է նորա քունը..... Բայց ահա գալիս է թշուառ Մկրտիչ աղքատը.... Անբաղդ.... Ինչպէս խնայումեմ նորան.... Երբ ես նորան միայնակ տեսնումեմ անտառում, միշտ ցաւումեմ նորան և վախենումեմ. նա միշտ մտածմունքի մէջ է և տխուր։ Ոչ ոք երբէք տեսած չէ նորա ծիծաղը։ Ինչպէս ծուլել է նա իւր ծանր բեռի տակ։ (Հեռանումէ երգելով)։

Երևոյթ Ե.

ԱՂՔԱՏ (միայնակ, շատ աղքատ, բայց մաքուր հագուստ ունի հագած, գիսակն է դնում մի խորձ փայտ)։

Ես միշտ վերադառնումեմ այս տեղը. կարծես թէ վերջապէս այստեղ պիտի գտնեմ իմ եղբօրս, որին արդէն 30 տարի է չեմ տեսած։ Իզուր ես ինձ հաւատացնումեմ թէ իմ խուզարկումներս զուր են, սակայն դարձեալ շարունակումեմ անդադար հարցու փորձս։ Իմիջս ինձ հանգիստ չէ տալիս, նա միշտ

ստիպումէ ինձ որոնելու եղբօրս, ոչից բաժանված եմ իմ վատ վարմունքիցս հետէ։ (Շուրջ նայելով)։ Ինչպիսի գեղեցիկ օր է։ Սարերը եւ դաշտերը իմ աչքերիս ուրախ եւ գեղեցիկ կանաչ սփռոց են ներկայացնում։ Բայց այն զարհուրելի փոթորկալից գիշերից յետոյ, երբ մենք ինանիր որոնումէինք եղբօրս, բոլոր բնութիւնը ինձ համար փոխվեցաւ։ Երկինքը միշտ իմ վերաս բարկացած այլ ես գեղեցիկ չէ երեւում ինձ։ Արեգակը, որի ոսկեգոյն Ճառագայթները առաջ զմայլեցնումէին ինձ, այժմ իւր դողդոջուն եւ տխուր Ճառագայթներ է ձգում եղեւնի Ճիւղերի մէջով. նա ինձ լուսին է թուում։ Քամու ձայնը վախեցնումէ ինձ անտառում։ Տերեւների շշուկը զարհուրանքի մէջ է ձգում ինձ։ Ա՜խ, ինչ չարչարանք է անմաքուր խիղճը ունենալ։ Սա դժոխք է սրտի մէջ։ Ո՜հ, ես կցանկանայի բարձրաձայն աղաղակել երկրի վերա բնակող բոլոր մարդիկներին, աղաղակել այնպիսի ձայնով, որից սարսռէին եւ զողային ասպատաժները եւ ամպերը։ Մարդե՜կ, մարդե՜կ, զգուշացէք յանցանքներ գործելուց։ Հեռացրէք ձեր գլխից չարութիւն գործելու խորհուրդն անգամ։ (Նստումէ փայտեայ նստարանի վերա ձեռները ծնկների վերա է դնում եւ նստումէ երկնքին)։ Եղբա՜յր, սիրելի եղբա՜յր, քաղցր Գուքիկ, ես ձգեցի քեզ այստեղ չարաչար նենգութեամբ։ Որտեղ ես արդեօք այժմ, վերացել ես արդեօք երկինքը, թէ դեռ ես ապրումես երկրի վերա։ Կարելի է Նորան գաղանները այստեղ կերան, կամ աւազակները տարան մեացրին երանց գաղտնի խորի մէջ։ Ո՜հ առաւել լաւ էր, որ ես կործան-

վէջ, առաւել լաւ էր, որ հա մեռնէի, քան թէ արատաւոր ապրէի։ Այ՛ն, այ՛ն, առաւել լաւ է մեռնիմ։ (Վերը է կենում և նայումէ այն կողմը, ուր քնած է Արգաւանը)։ Աստուած իմ.... ինչ եմ տեսնում։ Երկնային զօրութիւնները, մի թոյլ տաք ինձ խելագարելու։ Ցանցաւոր խիղճս չէ արդեօք որ խաւարեցնումէ իմ բանականութիւնս... Կամ մի թէ երբօրս ստուերը հաչածումէ ինձ.... Ոչ, ոչ, սա նա չէ, երևակայութիւնս ինձ խարումէ։ Սա նա չէ, (աչքերը սրբումէ և նայումէ Արգաւանի վերա)։ Չէ, տեսիլը չէ անցնում, անշուշտ տղան մոլորվել է, կտանեմ նորան իւր ծնողների մօտ։ (Մօտենալով նորան)։ Սիրուն տղան շատ նման է երբօրս։ Երեսի նոյն գծագրութիւնը, նոյն սեաւ մազերը և նոյն կաշին այտերը։ Չեմ վստահանում նորա հետ խօսել սիսել, բայց նա ժպտումէ երազում։ Զարթեցնեմ նորան։ Հանգիստ, հոգեակ, զարթիր, վերկաց։

ԱՐԳԱՐ (քնի մէջ)։ Ի՞նչ կայ, ինչի համար։ Ո՞վ է, թոյլ տուէք մի փոքր ևս քնեմ։

ԱՂԲԱՏ։ Մի՛ լարկանար, օրդեակ։ Ի՞նչ է քո անունդ։

ԱՐԳԱՐ (նեղանալով)։ Նոքա գիտեն, որ իմ անունը Արգար է։

ԱՂԲԱՏ (զարմացած)։ Աստուած, զօրացրու ինձ։

ԱՐԳԱՐ (վեր է կենում և նայումէ նորա վերա ապշած)։ Դու ո՞վ ես։

ԱՂԲԱՏ։ Ոհ ես շատ անբաղդ մարդ եմ, ես մարդկների մէջ ամենաանբաղդն եմ։

ԱՐԳԱՐ։ Շատ խնայումեմ քեզ, խեղճ մարդ։ Քաղցած չես արդեօք։ Կարծեմ գրպանումս մի կտոր

հաց պիտի ունենամ.... Ը, ես արդէն կերել եմ։

ԱՂՔԱՏ. Դու շատ բարի ես, սիրուն մանկիկ իմ. իմ կորած եղբայրս ևս բոլորովին այդպէս էր... Ա՜աղ։

ԱՐԳԱՐ (առաջարկելով նորան). Ահա առ այս ելակը։

ԱՂՔԱՏ (զարհուրելով յետ է քաշվում). Ելա՛կ.... պատանեակ, քեզ ո՞վ սովորեցրեց ինձ ելակ տալ. մի՞թէ միա աշխարհից ես եկած դու։ Այո, դու իմ եղբայրն ես։ Քեզ կերած էին գազանները, և այժմ քո հոգին երևումէ իմ առաջ։ Վեր առ այս ելակները, սոցա լուսաքանչիւր պտուղը իմ յանցանքըս է ցուցանում ինձ. (Թուլացած վայր է ընկնում)։

ԱՐԳԱՐ (վախեցած, ձգումէ կողովը, փախչումէ և մեծ երկիւղով աղաղակումէ). Հայրիկ, Տիգրան, Հեղինէ, օգնեցէք։

Երևոյթ Զ.

ԱՌԱՋԻՆՆԵՐ և ՀՆԳԻՆԷ։

ԱՐԳԱՐ (վազելով նորա մոտ). Ա՛խ այս մարդը սաստիկ վախեցրեց ինձ, կարծեմ նա այժմ մեռած է։

ՀՆԳԻՆԷ. Ոչ, ոչ, նա ամենևին չէր կամենում քեզ վախեցնել, նա չէ մեռած, հապա նորա գլուխը ցաւումէ։ Ես բոլորը լսեցի և բոլորը տեսայ։ (Առանձին)։ Ինչ զարհուրելի տեսարան է. ես երկիւղից դողումեմ։ Կգնամ բոլորը կպատմեմ հորս (եղբօր ձեռից բռնած տանումէ)։

Երևոյթ Է.

ԱՂՔԱՏ (մենակ, փոքր առ փոքր սթափելով).

Անցաւ աչքերդ տեսնելը։ Ո՛չ, սա տեսնել չէր, ա՛հա դեռ այստեղ կողով կայ, պտուղները թափված են դալարի վերա։ Ես նորից կժողովեմ կողովի մէջ։ Ո՛չ, չէ, ուրեմն լաւ է ես կրա՛լին ձեռը տամ, քան թէ այս պտուղներին, թողնեմ նոցա։ (Փայտերը բառնալով)։ Ա՛խ, ինչպէս ծանր է այսպիսի բեռը իմ թոյլ անձիս համար։ Բայց եթէ իմ խղճիս վերա չլինէր առաւել ծանր բեռը, այս բեռն ես ինձ համար բաւական թեթեւ կերևէր. (գնումէ հանդարտ քայլելով)։

Երևոյթ Ը.

ՍԱՀԱԿԵԱՆ, ՏԻԳՐԱՆ, ՀԵՂԻՆԷ ԻՒ ԱԲԳԱՐ.

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Այս ծարդը ասումէը, որ մեր Աբգարը նման է իւր եղբօրը, Աբգարի անունը և մի կողով ելակը նորան սաստիկ վախեցրին։

ՀԵՂԻՆԷ. Այնպէս վախեցրին, որ ուշաթափ վայր ընկաւ։ Երևի նա դեռ ես այստեղ է պառկած, նայենք տեսնենք։ Ո՛չ, նա արդէն գնացել է։

ՏԻԳՐԱՆ. Ահա նա ծանրաքայլ բարձրանումէ բլրի վերա։ Հայրիկ, սա ձեր եղբայրն է։

ՀԵՂԻՆԷ. Ի՞նչպէս թէ եղբայրն է։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Հաղուստի և արտաքին տեսքի համեմատ մի դատէք։ Եթէ այս դժբաղդ մարդը այժմ առաքինի է դարձել, նորան ամեն բան ներված է։

ՀԵՂԻՆԷ. Ինչ որ լինի նորա յանցանքը, նա անկեղծօրէն զղջումէ։ Ես բոլոր կեանքումս սորա նման բան չէի տեսած, և այս ամեն բանում ոչինչ չեմ հասկանում։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Սիրելի Հեղինէ, Տիգրանը կպատմէ քեզ բոլորը։ Գնացէք այստեղից մի վայրկեան և ինձ միայնակ թողէք. ես շատ յուզված եմ, առաջադրանք պէտք է հանդարտեմ, և ապա խօսեմ այս մարդի հետ։

ԱՐԳԱՐ. Հայրիկ, մի կանչէք նորան. նա զարհուրելի է։

ՀԵՂԻՆԷ. Այդ ճշմարիտ է, ես երկիւղ կկրէի նորա հետ միայնակ մնալու այստեղ, այս անտառում։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Հանգստացիր, սիրելի Հեղինէ։ Գնա եղբայրներիդ հետ զբօսնելու, մինչև որ ես նորա հետ կխօսեմ։ (Մանուկները գնումեն)։

Երևոյթ Թ.

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ ԵՒ ՄԱՐԻԱՄ.

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Փառք Աստուծուն, վերջապէս գտայ եղբօրս։ Անկասկած նա ինքն է։ (Դէպի նորան է նայում). կարծես նա բոլորովին վհատել է... և յաճախ կանգ է առնում... բայց ես ևս բոլորովին զողումեմ և վախենումեմ նորան յայտնել, որ ես նորա եղբայրն եմ։ (Մի քանի քայլ է անում)։ Կկանչեմ քանի որ նա չէ անցած ժայռերից։ Է՞յ, էյ, եկէք մի այստեղ։

ՄԱՐԻԱՄ. Ինձ էք կանչում արդեօք, պարոն. եթէ կամենումէք խմել, ես սավորումս թարմ ջուր ունիմ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ոչ, աղջիկս, ես կանչումեմ այն խղճուկին, որ բարձրանումէ այն ժայռերի վերա։ Բայց և այնպէս տուր ինձ փոքր ջուր խմեմ։ (Խմումէ)։

ՄԱՐԻԱՄ. Ահա գալիս է նա։ Խեղճ աղքատ։ Մեր մէջ կան մի քանի մարդիկ, որոնք հաւատացնումեն թէ նա խելագար է, բայց նա աւելի խելացի է քան-թէ կարծումեն։ Նա վայտի խուրձը վայր դրեց խոտի վերա, որ ազատվի աւելորդ նեղութենից։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ո՞Հ Աստուած իմ։ Սա անշուշտ իմ եղբայրն է։ (Բարձր). Աղջիկս, ճանաչումես արդեօք նորան։

ՄԱՐԻԱՄ. Իհարկէ. նորան բոլոր մարդիկները ճանաչումեն։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Նա ինչ մարդ է։

ՄԱՐԻԱՄ. Նա շատ բարի մարդ է։ Երեխաներին մինչև անգամ չի վշտացնիլ, և գիշեր և ցերեկ աշխատումէ.... բայց... (Ճակատի վերա ցոյց տալով). ահա նորա այստեղը անկարգ է։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ի՞նչ կայ։

ՄԱՐԻԱՄ. Սորա մասին շատ հազիւ են խօսում։ (Ցած ձայնով)։ Սորանից շատ տարիներ առաջ, վաղուց վաղուց նա անտառում թողել է իւր փոքր եղբօրը և տղան յետոյ կորել է։ Այս անբաղդութեան յիշատակը մինչև ցայժմ խեղճ աղքատին դադար չէ տալիս։ Որքան ծերանումէ, այնքան այս յանցանքը մաշումէ նորան։ Շատ անգամ նա ինքն իրան կորցնումէ և կատաղի թափառումէ անտառում, երբև ստուերը.... Եթէ ջուրը խմեցիք արդէն, տուէք ինձ սափորը։ Ես ջուրը պիտի տանեմ մի խեղճ ծերունուն, որն ինձ սպասումէ և որին ես սիրումեմ ինչպէս հօրս։ Ես կարող էի երկար խօսել ձեզ հետ նորա մասին, բայց ժամանակ չունիմ և չեմ կամենում պատմութիւններով ժամանակս

կոչնեմ։ Մնացէք բարով, պարոն։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. (գրպանից հանելով քսակը). Սպասիր... ահա քեզ ընծայ։

ՄԱՐԻԱՄ. Ներողութիւն։ Ի՞նչ կարելի բան է, մի բաժակ ջրի համար ինձ վրդ էք տալիս։ Մի՞թէ դուք կարծում էք, որ ես ձեզ ջուր առաջարկելով, միտք ունէի ձեզանից վարձ խնդրելու։ Ոչ, ես երբէք ողորմութիւն չեմ խնդրում։ Մի կտոր հաց խնդրել, որը կարելի է աշխատութեամբ ձեռք բերել, նշանակում է գողանալ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Այս վրդով գնիս գնի այն ծերունու համար, որին դու այդքան սիրում ես։ Գինին կգօրացնէ և կուրախացնէ նորան։

ՄԱՐԻԱՄ. Այդպիսի առաջարկութիւնը չէ կարելի մերժել։ Տէր Աստուած թող հաստատեցանէ ձեզ ձեր ընծայի փոխարէնը, որ դուք այդպէս բարեսիրտ էք։ Մնացէք բարով, պարոն։ (Նա շտապով դուրս է գնում)։

Երևոյթ Ժ.

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ ԵՒ ԱՂՔԱՏ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ահա նա։ Ի՞նչպէս սիրուս բարախումէ։ Աստուած իմ, տխրութիւնը նորա երեսի վերա կինճիռները է բերել։ Ի՞նչպէս խնայումեմ նորան։ Ի՞նչպէս խօսեմ նորա հետ, կխօսեմ սրտանց. նորան դուռ կասեմ։

ԱՂՔԱՏ. Դուք հաճեցաք ինձ կանչել։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ (բարեկամաբար բռնումէ նորա ձեռը։). Շատ լաւ է, որ այդպէս քաղաքավարի ես այն անձի հետ, որին ամենևին չես ճանաչում։

ԱՂՔԱՏ. Ես չեմ կարող այլապէս լինել։ Դառն

Ճակատագիրը ինձ մի սիրիանք միայն թողած է. ծառայել ամեն միին և ամենքին. բոլոր մարդիկը այսպէս պիտի մտածէին։ Ցաւումեմ միայն, որ աղքատութիւնն արգելումէ ինձ այն ամեն ծառայութիւնները անելու, որով կցանկանայի մարդիկներին օգնել։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Աստուած քո դիտաւորութիւններդ համար վարձատրումէ քեզ, իմ բարեկամ։ Քո զգացմունքին ես շատ հաւանումեմ և ցանկանումեմ քեզ հետ բարեկամութիւն ունենալ։ Անակնկալ դէպքը յայտնեց ինձ քո չարչարանքների և տխրութիւնների գաղտնիքը։

ԱՂԲԱՏ. Տէր Աստուած, դուք տեսնումէք իմ արիւնաթաթաւ վէրքը և դարձեալ ինձանից չէք խորշում։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Բոլորը գիտեմ, և ցաւումեմ քո վերա։ Մինչև անգամ կարծումեմ թէ կարող եմ քո վէրքը բժշկել։

ԱՂԲԱՏ. Ես հաւատացած եմ, որ անկարելի է։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Իսկ ես հաւատացած եմ, որ ունիմ այն դեղը, որը չէ կարող յաջողութիւն չունենալ։ Ես եկած եմ քեզ հետ խօսելու քո կորած եղբօրդ մասին։

ԱՂԲԱՏ (բռնումէ նորա ձեռը). Ազատումեմ ձեզ ամենակարող Աստուծու անունով, մի խաբէք ինձ դատարկայոյսերով։ Ասացէք բոլորը ճշմարտութեամբ, ինչ որ գիտէք եղբօրս մասին։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Նա կենդանի է։ Հարստութեան և պատուի մէջ է ապրում. կամենումէ քեզ օգտակար լինել։ Ես եկած եմ քեզ յայտնել նորա դիտա-

սորութիւնները, որովհետև ոչ ոք չգիտէ նորան ինձ նման լաւ և մանրամասնօրէն։

ԱՂՔԱՏ։ Նա կենդանի՞ է, նա ուղարկած է՞ ձեզ ինձ մօտ, ինձ անտէրիս և թշուառիս մօտ։ Ուրեմն նա չէ՞ արհամարհում, չէ՞ ատում ինձ անբաղդիս։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Նա արդէն վաղուց քեզ ներած է կամ, լաւ էս ասեմ, երբէք չէ բարկացած քո վերա։ Նա շատ անգամ արտասուումէր մտաբերելով եղբօրը։ Շատ ժամանակ է արդէն, որ նա քեզ որոնումէ, վերջապէս նախախնամութիւնը քնած մանուկի և մի կողով ելակի միջոցով ձեզ մօտեցնումէ։ Քո եղբայրը այստեղից շատ հեռու չէ....։

ԱՂՔԱՏ. Փառք Աստուծուն. վերադառնումեմ դէպի կենդանութիւն։ Ես նման եմ այնպիսի մարդին, որին ողջ ողջ թաղել են գետնում և որը, դուրս գալով գերեզմանից, սկսումէ արեգակի պայծառ ճառագայթները վայելել։ (Զոքումէ) Աստուած իմ, Աստուած իմ, գոհանամ քեզանից Քո ողորմութեան համար։ (Վեր է կենում)։ Ո՞րտեղ է եղբայրս. Ճշմարիտն ասեմ, ես վախենումեմ նորա հետ տեսնվելու։ Իմ ծնկները կծալվին, երբ ինձ կմոտենայ նա, որին ես այնքան սաստիկ վշտացրի։ Սակայն սիրտս ցանկանումէ նորան տեսնել։ Ո՞ւրտեղ է, ո՞ւրտեղ է։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ահա նա։ Ես եմ քո եղբայրը։

ԱՂՔԱՏ (Հեռանալով). Ի՞նչպէս։ Դուք ա՞ն Դուքին էք, որին ես այստեղ ձգեցի այնպէս անգթաբար։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Մի կասկածեր, ես նոյն իսկ եղբայրդ եմ։

ԱՂՔԱՏ (ծունկ չոքելով). Ս'ղբայր, սիրելի ե'ղբայր։ Ներիր ինձ. Ոտներդ տամ խնդրումեմ.... Ներիր ինձ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. (բարձրացնելով նորան). Աբի, վեր կաց, այստեղ իմ մօտ, դէպի իմ գիրկս։ Մուսանանք անցեալը և տրտմութիւնները։ Աստուած ամենայն ինչ դէպի լաւը կարգաւորեց։ Նա անբաղդութենից բաղդաւորութիւն գոյացրեց։ (Սիրով համբուրումէ նորան)։ Ինձ դու ասա։ Ո՞րքան ուրախութիւն է ինձ համար քեզ տեսնելը։

ԱՂՔԱՏ. Ո՜հ ինչպէս բարի ես դու։ Քո գրկիդ մէջ ես նոր կեանք եմ գտնում։ Ո՜հ, եթէ դու գիտենայիր, թէ ես ինչպէս էլի ողբում իմ արարմունքը.....։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Բաւական է, դադարենք դրա մասին խօսելուց։ Ես քեզ գտայ, դու ինձ տեսնումես։ Դոհութիւն և փառք պիտի տանք Աստուծուն։ Բայց... գրեթէ չեմ համարձակւում քեզ հարցնել.... արդեօք հայրս կենդանի է։

ԱՂՔԱՏ. Կենդանի է, բայց ապրումէ վշտի և աղքատութեան մէջ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Կենդանի է։ Փառք Աստուծուն։ Դնանք շուտով նորա մօտ, գնանք հայրենի խրճիթը։

ԱՂՔԱՏ (մատնացոյց անելով). Ահա նա ևս այստեղ է գալիս։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ո՞վ։

ԱՂՔԱՏ. Մեր հայրը։ Զգիտեմ ինչ պատճառով նա յոժարացել է այստեղ գալ։ Նա շատ ուշ ուշ է տանից դուրս գալիս, միայն կիւրակէ և մեծ տօն օրերը եկեղեցի է գնում Ո՜հ, մի գուցէ անչափ ու-

բախութիւնից վնասվի։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Բոլորովին կրաւ է ասածդ, սիրելի եղբայր։ Ջնայելով ցանկութեանս, չեմ կարող նորան գրկել առանց առաջադոյն նորան պատրաստելու այսպիսի անսպասելի փոփոխութեան համար։ Ես ինքս դողումեմ երջանկութենից։ Ուրեմն ուրախութիւնը ինչ ներգործութիւն պիտի ունենայ Թուլացած, տարիներով հասակով մաշված մարմնի վերա։ (Աչքերը դարձնում է դէպի հայրը)։ Բարի ծնող իմ, դու չես երևակայում թէ դու արդէն մօտ ես քո կրտսեր որդուդ։ Ի՜նչ պատուական ծերունի է, ինչպէս բարի է և յարգանքի արժանի։

ԱՂՔԱՏ Ես ուրախանումեմ, որ դու վերջապէս մեզ չնորհվեցար, ոչ այնքան ինձ համար, որքան հօրս համար։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ահա նա արդէն այս թափն եկաւ է։ Նա շուտ կմօտենայ մեզ։ Գնանք և մտածենք թէ ինչպէս պատրաստենք նորան այս ուրախալի լուրը յայտնելու։ (Երկուսն ևս դուրս են գնում)։

Երևոյթ ԺԱ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ—ԾԵՐՈՒՆԻ ԵՒ ՄԱՐԻԱՄ։

(Յովհաննէսի սպիտակ մազերը ցրուած են ուսերի վերա։ Հագուստը աղքատ է, բայց մաքուր։ Ծերունին յենված է գաւազանի վերա։)

ՅՈՎՀԱՆՆԷՍ։ Ես յոգնեցի, բոլորովին ոչ-ինչ ընկայ։ Կհանգստանամ այն նստարանի վերա։ Ամ եթէ տեսնէի Ճանապարհորդ պարոնին։

ՄԱՐԻԱՄ. Մի անհանգստանաք. նորա կառքը կոտրվել է, իսկ մեր դարբինը շատ ծոյլ է, նա ե-

ռկի ոչ այսօր և ոչ վաղ առաւօտ կարող է աւարտել նորոգութիւնը։

ՅՈՎՀԱՆՆԷՍ։ Ես պէտք խօսեմ այդ պարոնի հետ։ Ինչպէս է եղած, որ մի բաժակ ջրի համար մի ոսկի է տուել, մի ոսկի, որով կարելի է մի ամբողջ տակառ գինի գնել, նա անշուշտ սխալվել է։ Բարի պարոնը չէ նայած փողի վերա և տուել է քեզ։

ՄԱՐԻԱՄ։ Կարելի է։ Ես չգիտէի թէ որքան արժէը այդ փողը, եթէ ոչ, ես նորանից կհարցնէի թէ արդեօք չէ սխալված։ Երևումէ, որ նա շատ նշանաւոր մեծատուն ոմն է։ Ես դեռ չեմ տեսած նորա նման մարդիկ։ Նա երկու հագուստ ունի, մին միւսի վերա հագած, սա ինձ շատ զարմացրեց։ Երբոր մին բացեց, կուրծքի վերա խաչ տեսայ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Բահ. ...։ Բայց ով և լինի, մեը խեղճը չէ կարող թոյլ տալ, որ պահենք նորա փողը։ Ես ամօթ ալիտի չկրեմ սպիտակ մազերիս վերա, և դու քո վարդագոյն այտերի վերա։ Տանք նորան իւր ոսկին։ Աշխարհիս ոչ մի բանի հետ ազնուութիւնը պէտք չէ փոխել։

ՄԱՐԻԱՄ. Ճշմարիտ է, մինչև անգամ ոսկեայ սարերի հետ էլ։ (Նայումէ հրոս կողմը)։ Արդեօք ո՞ւր գնաց այն պարոնը։ Ես կգնամ, կտեսնեմ նորան գտնել (գնումէ)։

Երևոյթ ԺԲ.

ԱՂՔԱՏ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ։

ԱՂՔԱՏ. Հայրիկ, ես ձեզ մխիթարական լուր եմ բերած։ Ես առողջ եմ. եմ հիւանդութիւնս արդէն անցաւ։ Փառք Աստուծուն, ես այժմ բոլորովին ու-

բիչ մարդ եղայ։ Իմ սրտի վերա եղած քարը արդէն վերացաւ։ Խնդրումեմ ուշի ուշով նայեցէք ինձ վերա։

ՑՈՎՀԱՆՆԷՍ։ Իրաւ է, քո աչքերի մէջ ուրախութիւն է փայլում, և ցոյց են տալիս, որ դու առողջացել ես։ Դու բոլորովին փոխված ես, ես վաղուց արդէն քեզ այսպէս ուրախ չէի տեսած։ Բայց ասա, ինչ է պատահած քեզ հետ, ասա։

ԱՂՔԱՏ։ Ես մեր Գուգլիկի մասին լուր ստացայ։ Նա դեռ կենդանի է. նա շատ հարուստ մարդ է, ամենքը նորան յարգումեն և իւր արժանաւորութեան համար խաչ է ստացած։

ՑՈՎՀԱՆՆԷՍ. Ահ, որդեակ, դու բոլորովին խանգարեցիր իմ ուրախութիւնս. ոչ, դժբախտաբար դու դեռ չես առողջացած։ Ինձ թուումէ մինչև անգամ, թէ դու բոլորովին խելագարած ես։ Դու քընած չես, բայց երազներ ես տեսնում։

ԱՂՔԱՏ։ Ոչ, ոչ, հայրիկ. ես ձեզ սուրբ ճշմարտութիւն եմ ասում։ Քո որդին կենդանի է, ես այս մասին հաւատացած եմ։

ՑՈՎՀԱՆՆԷՍ։ Տէր Աստուած իմ, եթէ սա ճշմարիտ լինէր... բայց ես չեմ կարող այս հաւատալ։ Իհարկէ նա երկնքումն է, և յոյս ունիմ, որ նորան կտեսնեմ..... բայց երկրի վերա.... ոչ....։

ԱՂՔԱՏ. Դու նորան կտեսնես երկրի վերա.... և շուտով։

Երևոյթ ԺԴ.

ՑՈՎՀԱՆՆԷՍ (միայնակ)։ Տէր Աստուած, չլինի թէ որդուս խելագարութեան նոր արկած է պատահած։ Այս միևնոյն տեղում ձգել էր նա իմ սիրելի

Գուգելկեն։ Անբաղդ։ Նա չենած է այս նստարանը.... և ՝ի՛ր քան արտասուք է թափած սորա վերա։ Ես վախենումեմ, որ երբէք չեմ գտնի Գուգելկես, իսկ նորա եղբօր հեւանդութիւնը կասստկանայ։ Ի՞նչ սարսափելի անորոշ կեանք եմ վարում, բայց թող Աստուծու կամքը լինի։ Ես պատրաստ՝ եմ նորան հնազանդել։

ԵՐԿՈՒԹ ԺԴ.

(ՓՈՔՐԻԿ ԱԲԳԱՐ, ՀԵՂԻՆԷ, ՏԻԳՐԱՆ ԵՒ ՑՈՎՀԱՆՆԷՍ)։

ԱՂՔԱՏ (Փոքրիկ Աբգարի ձեռից բռնած). Հայրը, նայեցէք լաւ այս փոքրիկ տղային և ասացէք. նորա դէմքը ծանօթ չէ արդեօ՞ք ձեզ։

ՑՈՎՀԱՆՆԷՍ. Տէր Աստուած, ի՞նչ եմ տեսնում։ Սա իմ որդու կենդանի պատկերն է։ Միայն թէ նա այդքան լաւ չէր հագնված։ Ի՞նչ զարմանալի նմանութիւն է։

ԱԲԳԱՐ. Ցանկանումեմ, որ Աստուած պարգևէ քեզ երկար և բաղդաւոր կեանք, բարի ծերունի։ Ահա իմ ձեռս, համբուրենք միմեանց։

ՑՈՎՀԱՆՆԷՍ. Շատ գեղեցիկ։ Քո փափուկ ձեռքդ ինչ իմ կոշտ և ծերութենից թուլացած ձեռքս մէջ։ Քո անունդ՞ ի՞նչ է, դու ո՞ւմ որդին ես։

ԱԲԳԱՐ. Իմ անունս Աբգար է, ես քո թոռն եմ։

ՑՈՎՀԱՆՆԷՍ. Ի՞նչ ես ասում։ Սա ի՞նչ զարմանալի բաներ են։ Ուրեմն, այս տղան ՝ի՛ր տեղից է։

ՀԵՂԻՆԷ (նորա մօտ վազելով). Սիրելի, բարի պապս։ (Համբուրում է ձեռը)։ Ո՞՛ր քան ուրախ եմ, որ դուք դեռ ևս այսպէս առողջ և ուժեղ էք։

ՑՈՎՀԱՆՆԷՍ. Օ՜, ինչդ, դուք իհարկէ կատակ էք անում։ Սա կատակ է։ Ծերի վերա ծիծաղելը լաւ չէ։

ՀԵՂԻՆԷ. Ահ, ինչ էք ասում։ Նայեցէք լենձ վերա, և դուք կտեսնէք իմ աչքերիս մէջ ուրախութեան արտասուքները։ Ես կատակ չեմ անում ասելով, որ ես ձեր Թոռն եմ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ով ամենակարող Աստուած, իմ սիրտը վառվում է և արտասուքներս Թափվումեն աչքերից։ Բայց այս բոլորը երազ է։ Իմ ուրախութիւնս չափազանց մեծ կլինէր, եԹէ ես սխալված չլինէի։

ՏԻԳՐԱՆ (նոյնպէս վազումէ դէպի նա). Սիրելի պապ, ահա դարձեալ մի ուրիշ Թոռ։ (Կամենումէ ձեռը համբուրել)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ (ձեռը քաշելով)։ Ի՞նչպէս. Դարձեալ մի Թոռն, ինչ երկնային ուրախութիւն է սա։ Աստուած իմ, որքան ողորմած և գԹառատ ես։ Դուք իմ որդուս զաւակներն էք, այնպէս չէ՞։

ՏԻԳՐԱՆ. Բոլորովին այդպէս է։ Ո՞րքան ուրախ ենք, որ վերջապէս մենք ձեզ հետ ենք։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Աւաղ, ո՞րքան կցանկայի հարցափորձել ձեզ, բայց իմ սիրտս յօժարացած է այժմ միայն ուրախութեան համար։ Չգիտեմ ո՞րտեղից սկսեմ։ Դու, իմ սիրելի Աբզար, ասա ո՞րտեղ էք ապրում դուք։

ԱԲԴԱՐ. Հեռու, շատ հեռու այստեղից, այն քաղաքում, որտեղ բնակումէ նոյն ինքն կայսրը։

ՅՈՎՀԱՆՆԷՍ (Հեղինէին). Իսկ ձեր անունն ինչ է։

ՀԵՂԻՆԷ. Սիրելի պապս, աղաչումեմ ձեզ, խօսեցէք լենձ հետ աւելի մտերմութեամբ և բարեկամութեամբ, մի ասէք լենձ «դ ո ւ ք», այլ ասացէք լենձ մտերմական «դ ո ւ»։ Հայրս լենձ Հեղինէ է կանչում։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Շատ գեղեցիկ։ Այդ անունը կրումէր ձեր մեծ մայրը։ Ուրեմն Հեղինէ, ասա լենձ, ո՞վ է քո հայրը։

ՀԵՂԻՆԷ. Զօրասլետ է և կայսրը նորան շատ է սիրում։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ինչպէս.... կայսրը նորան սիրումէ և յարգումէ։ Երանի նորա ծերունի հօրը։ Աստուած օրհնէ բարի կայսրին։ (Դէպի Տիգրան)։ Հապա դուք, պատանեակ, ասացէք ձեր անունը։

ՏԻԳՐԱՆ։ Բարի պատ է, իմ անունս Տիգրան է, բայց խնդրումեմ, որ ինձ էս «դուք» ասէք։ Ես ձեզ շատ եմ սիրում ու յարգում, սիրելի պատ է։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ես էս, սիրելի իմ Տիգրան, սիրումեմ քեզ բոլոր սրտով։ Ի՞նչ ուրախութիւն է յանկարծ երեք Թոռներին տէր դառնալ, այսպիսի փոքրը, այսպէս յաւ դաստիարակված Թոռները։ Սակայն ո՞ւրտեղ է ձեր հայրը։ (Տիգրանը ցոյց տալով պ. Սահակեանին)։ Ահա նայեցէք, պապիկ։ (Մրմնումէ պ. Սահակեան)։

Երևոյթ ԺԵ.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, Պ. ՍԱՀԱԿԵԱՆ ԵՒ ՄԱՐԻԱՄ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ (վազելով և գրկելով հօրը)։ Հայր իմ, սիրելի հայր իմ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ո՞ր դեակ։ (Կամենումէ վերկենալ)։ Ծնկներս Թուլացան և բոլոր մարմինս դողումէ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ (գրկելով նորան)։ Հայր, բարի հայր իմ։ Ո՜հ անակնկալ տեսութեան բաղդաւոր ժամ....

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Այսուհետև հանգիստ կմեռնեմ, որովհետև համբուրեցի քեզ։ Ես արդէն յոյս կտրել էի քեզ երկրի վրայ տեսնելու։ Բայց Աստուած քո զաւակներին էս ցոյց տուեց ինձ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Նա մեզ բարի է և արդար, գո-

հութիւն տանք Նոբան։ Ես բոլորովին բաղդաւոր եմ ձեզ տեսնելով, որ կարող եմ ցոյց տալ ձեզ իմ զաւակներս։ Խնդրումեմ ձեզ օրհնեցէք Նոցա։

ՀԵՂԻՆԷ (Ծունկ չոքելով). Այո, բարի պապ, օրհնեցէք մեզ (Տիգրանը և Արզարն ևս չոքումեն)։

ՑՈՎՀԱՆՆԷՍ. Ձեզ օրհնե՛լ, պատրաստ եմ բոլոր սրտով։ (Ձեռները նոցա գլխին է դնում). Ամենամեծ, Ամենաբարի և Ամենիմաստ Աստուած օրհնէ ձեզ ամենքիդ, մեծացնէ և զօրացնէ ձեզ առաքինական կեանքով, ամէն։ (Բարձրացնումէ նոցա)։ Որդեակ, դու քո երեք զաւակներիդ երբեմն երեք հրեշտակներին բերիր իմ մօտ, բայց ո՞ւրտեղ է նոցա քնքոյշ մայրը։ Ի՞նչի նա այստեղ չէ։ Չլինի թէ նա ևս քո մօրդ հետ միասին երկնքի մէջ է, կամ թէ երկրի վերա է ապրում։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Նա դեռ կենդանի է։ Նա բարի և վեհանձն կին է։ Հիւանդութեան պատճառով նա հանքային ջրերը ջուր խմելու և լողանալու պիտի գնար։ Իսկ այժմ Նոբա հիւանդութիւնն ևս բարւոքվումէ։ Ո՛րքան բաղդաւոր ճանապարհորդութիւն պարգևեց մեզ Աստուած. ինչ ուրախութեամբ իմ ամուսինս պէտք է տեսնէ ձեզ։ Վաղէ՛ կարծեմ կկարողանամ Նոբան ներկայացնել ձեզ և դուք միասին կօրհնէք որդուդ և դուստրդ. որովհետև նա բոլորովին արժանի է ձեր դուստր անուն կրելու։

ՑՈՎՀԱՆՆԷՍ. Քո խօսքերդ մեծացնումեն իմ բաղդաւորութիւնս, բայց ասա՛ լնա՛, ի՞նչպէս կարողացար այդպէս շուտ ճանաչել քո եղբօրդ։

ԱՂՔԱՏ (մօտենալով). Բաղդը մեզ յաջողեց, և ի՞նչպէս. այս մի կողով ելակի միջոցով։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Այս մի կողով ելակի մեղրոցով։ Մի-թէ կարելի է։ Ով ամենակարող Աստուած, որքան անքննելի են քո Ճանապարհները։ Այս հասկանումեմ։ Մարիամը ինձ պատմեց քնած մանուկի և մի կողով ելակի մասին։ Ոչդեակ, ելակն անշուշտ քո սիրտը կը-վրդովէր. պատմեցէք ինձ բոլորը մանրամասնարար։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Հայր, այդ մասին մենք ժամանակ կունենանք խօսելու, այժմ հարկաւոր է Ճանապարհի պատրաստութիւն տեսնել։ Այս գոպէից դուք ինձ հետ կապրէք։ Ձեր ծերութեան տխուր օրերը թող այսու-հետև ուրախութեան և առատութեան մէջ անցնին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ինձ նման ծերունին չէ կարող մայրաքաղաքի մէջ ապրել։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Ես գեղեցիկ ամարանոց ունիմ քա-ղաքից դուրս։ Եթէ դուք նորան կհաւանէք, կարող էք այնտեղ բնակել, նա բոլորովին ձերը կլինի։ Եւ դուք էս, իմ սիրելի եղբայր, մեղանից նոյնպէս չես բաժանվի։ Ամարանոցում դուք քեզ համար պա-տպմունք կգտնես։ Այժմ, երբ եղբայրդ գտնվեցաւ, այլևս հարկ չկայ քեզ տխուր լինելու։

ԱՂՔԱՏ. Աստուած իմ, ես կարողացայ քո այդպիսի ողորմութեանը արժանի համարվել. մի մանուկի անպգոյշ վարմունքը ինձ զարհուրելի հետևանքներ կարող է ունենալ։ Սիրելի մանուկներ, նայեցէք ինձ, դուք տեսնումէք, որ ես տանջանքով և աղքատութեամբ ընկճված, մեռած մարդ եմ։ Նայեցէք իմ հնոտի հագուստին և ապա ձեր հօր վերա, որը դեռ ևս երիտասարդ է և այդպէս փառքի և բաղդաւորութեան մէջ է։ Նոյն իսկ մանկութենից նա գեղեցիկ յոյսերի պատճառ էր։ Այսպէս է. լաւ ծա-

ղեկները լաւ պտուղներ են բերում։ Առաքինի գաւակները յետոյ բաղդաւոր մարդիկ են դառնում։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Դու իրաւ ես խօսում։ Այո, իմ գաւակներս, երբեմն աննշան պակասութիւնը անհամար թշուառութիւններ է առաջացնում։ Ամեն ժամանակ կարող ենք թերութեան մէջ ընկնել, և մինչև անգամ օրինազանց լինել։ Օրինակ. ելակը գեղեցիկ պտուղ է, և թէպէտ հաղուագիւտ չէ, բայց նա գայթակղեցրեց խեղճ որդուս, որը ձգեց եղբօրն անտառում, որի համար և երկար տարիներ չարչարվեցաւ։ Բայց երբ մեղաւորը ապաշխարումէ, Աստուած վերաձգնումէ նորան բաղդաւորութիւն։ Աստուած իւրն դատակին հանելու համար, հազարաւոր միջոցներ է գործ դնում։ Մեզ նոյն միջոցով վերադարձրեց բաղդաւորութիւնը, ինչ միջոցով որ ընկել էինք անբաղդութեան մէջ, այսինքն մի կողով ելակի միջոցով։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Այո, Աստուած ամեն բան դէպի բարին ուղղեց, մեզ մնումէ միայն ուրախանալ մեր բաղդաւորութեան վերա։ Սակայն պատրաստվեցէք Հանապարհի, հայր, և դու էս, եղբայր, պատրաստվեցէք ինձ հետ միասին Հանապարհորդելու։

ՄԱՐԻԱՄ (լսելով վերջին բառերը, մոռնումէ ծերունի Յովհաննէսին և պատասուելով ասումէ). Ո՞հ բարի պապ իմ։ Մի գնաք, մի թողնէք ինձ միայնակ։ Պապ իմ, ես ոչ ոք չունիմ, որ ինձ խնամէ և պահպանէ։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Բահ, այս այն վոքրիկ օրիորդն է, որն ինձ ջուր տուեց խմելու։ Սա ով է, ինչով կարող եմ սորան օգնել։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Որդեակ, դու անշուշտ կլսիես մեր դրացի հին բարեկամ բարի Յակոբին, որն այստեղ ած-

խաղաղած էր։ Դու յանձախ գնումէիր նորա խրճիթը, և նա միշտ պատուումէր քեզ կամ ինձ հետ, կամ մի կտոր հացով։ Նա և նորա բոլոր ընտանիքը վաղուց արդէն հողի տակ են։ Միայն այս աղջիկը մնացած է։ Սա նորա թոռն է, բոլորովին որբ է և խնամումէ ինձ միշտ երբև իմ դուստր։ Այն ծերունին ես եմ, որի համար նա ջուր էր տանում, երբ քեզ էր հանդիպել։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Մրթէ։ Ուրեմն, հոգիս, դու մեր բարի ամխաղաղածի թոռն ես և իմ հօրս բարերարուհին։ Ես կհատուցանեմ քեզ այդ ամենի փոխարէն ինչ որ դու հօրս համար արած ես։ Այս վայրկեանից դու իմ դուստր կլինիս, մեզ հետ կգնաս և ես կհոգամ քո բաղդաւորութեան մասին։

ՄԱՐԻԱՄ (համբուրելով նորա ձեռը)։ Ձեր ողորմածութեան փոխարէնը Աստուած թող հատուցանէ։ Ես չգիտեմ թէ ինչպէս յայտնեմ ձեզ շնորհակալութիւնս։

Պ. ՍԱՀԱԿԵԱՆ. Աստուծուց գոհացիր, հոգիս։ Դու տեսնումես, որ Աստուած վարձատրումէ և չէ մոռանում Նորա անունով տուած մի կաթիլ ջուրն անգամ.... Հայրիկ, ես և դուք ցանկանումենք ձեր խրճիթը տեսնել, որն ինձ համար աւելի թանկագին է քանթէ չքեղ պալատն։ Տիգրան, դնա դուրը գ

-դում մեր ծառաներին, նոքա աշխատում կլինին կառքի մօտ, և ասա նոցա, որ բերեն պատի խրճիթը ճաշ հիւրանոցից և մեր լաւագոյն գինիները։ Մենք այնտեղ ամենքս միասին կկատարենք մեր բարդաւորութեան տօնը և այնուհետև ճանապարհ կընկնենք։

ՄԱՐԻԱՄ. Ես կգնամ գիւղ, որովհետև ես լաւ գիտեմ ճանապարհները։ Տիգրանին հարկ չկայ այնտեղ գնալու. նորա փոխարէն ես կկատարեմ ձեր պատուէրը։

ՀԵՂԻՆԷ (նորան կանգնեցնելով). Սպասիր, մենք միասին գնանք։

ԱՐԴԱՐ (մի կողով ելակ ձեռին). Այսօր ոչ ոք չէր կամենում ինձանից ելակը առնել։ Հայրս արտասուեց և հեռացաւ։ Աղքատն այնքան վախեցաւ նորանից, որ քիչ մնաց ուշաթափ ընկնէր։ Ցոյս ունիմ, որ

պատս կընդունէ սոյան։ Ահա, սիրելի իմ պատ, ընդունիր այս եւակը։

Պ. ՍԱՀԱԿՅԱՆ։ Այս մինոյն տեղում քառասուն տարի առաջ ես էլ ձեզ համար եւակ ժողովում, և այժմ ձեր խոռն է մատուցանում ձեզ մի կողով եւակը։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Շնորհակալ եմ, ովսիանա։ Բարձրեալ Աստուած, որ մինոյն ժամանակում ստեղծեցիր համեստ եւակները և հպարտ կաղնին, Դու, Որի անսպառ բարութիւնը հաստատապէս առանց խզբութեան տարածվում է բոլոր արարածների վերա, Դու մեծ գործ կատարեցիր այս մի կողով եւակի միջոցով, որի վերա մարդիկ սովորաբար սակաւ են ուշք դնում։ Ինչ յուսահատութեան մէջ ընկայ ես, երբ որդուցս զրկվեցայ։ Որքան արտասուքներս թափած է անտառում ձգված ոսկրս, և որքան չարչարանք կրեց նորա խեղճ հոգեպորը։ Իսկ այժմ որքան ուրախ և բաղդաւոր ենք։ Մեր թշուառութեան ընդէներում Դու պատրաստումէիր մեզ ամենքիս այս բաղդաւորութիւնը։ Իմ սիրաս լցված է անսահման գոհութեամբ և երախտագիտութեամբ առ Քեզ, ով ամենագութ Աստուած, որ միաժամանակ խնամումես և մխիթարումես երիտասարդ եղեսանագնին հոյակապ մարգարտաքաղի շքեղ պալատում, և թշուառ ծերունուն անապատ անտառի մէջ ազգատ խրճիթում։ (Զոքած ամենքը միասին երգումեն)։ Ամենայն ժամ օրհնենք զթած Աստուած, և բարձրացնենք Նորա սուրբ անուն։ Միշտ մատ է Տէր սրտով մաշվածներին, խոնարհներին Նա կենդանացնումէ, նեղութենից իւր ծառային փրկումէ. մեր ամենքի յոյս և փրկութիւն Նա է։ (Երգից յետոյ վարագույրը իջնումէ)։

Дозволено ценз. Тифлисъ. 17 сентября 1885 г.
Типографія М. Каламкарова. Алек. ул. д. № 2.